## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ Տ. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ ՍԵՐԲ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՊԱՎԼԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

*Ձերդ Սրբություն.*

*Հանուն Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության. խոր վշտով հայտնում ենք մեր սրտագին ցավակցությունն ու կարեկցանքը բոլոր զոհերի համար։ Աղոթում ենք առ Աստված, որ Տերը զորացնի Ձեր բոլոր հավատացյալ զավակների հոգիները՝ հաղթահարելու այն ծանր շրջանը, որի մեջ գտնվում է Ձեր երկիրն այս օրերին։*

*Թող Ամենակալն Աստված շուտափույթ խաղաղություն պարգեւի տարածաշրջանին, որպեսզի մարդիկ կարողանան ապրել սիրո, հույսի եւ խաղաղության պայմաններում։*

*Ի Տեր մեր Քրիստոս սիրով՝*

**ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՓՈԽԱՆՈՐԴ**